ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3772-Ա « 31 » հուլիսի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ԱՂԲԱՎԱՅՐ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 463-Ն որոշման հավելվածի 44-րդ կետի 4-րդ ենթակետը:

1. Երևան քաղաքի սեփականությունը համարվող փոքրածավալ բեռնատար /պիկապներ/ մեքենաներն (այսուհետ՝ Գույք) անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ին՝ համաձայն հ.1 հավելվածի:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ի տնօրենի հետ կնքել Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված Գույքի հանձնման – ընդունման աշխատանքներն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հ.2 հավելվածի:

4. Հանձնարարել հանձնաժողովի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, իրականացնել Գույքի հանձնման-ընդունման աշխատանքները:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված 1
Երևանի քաղաքապետի
31.07.2026թ.
հ. 3772-Ա որոշման

ՑԱՆԿ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ԱՂԲԱՎԱՅՐ» ՓԲԸ-ԻՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Անվանումը	Նույնականացման համարը	Միավոր արժեքը (ՀՀ դրամ)	Քանակը	Պայմանագրի ծածկագիրը
Փոքրածավալ բեռնատար (պիկապ) մեքենայի ձեռքբերում JAC MOTORS, ANHUI JIANGHUAI AUTOMOBILE GROUP CORP., LTD., JAC T6 HFC1037DKSV P306Q	VIN: LJ11PABD7TC041102	13 900 000	1 հատ	21.01.2026թ. կնքված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/19-1
Ընդամենը		**13 900 000**		

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված 2
Երևանի քաղաքապետի
31.07. 2026թ.
հ. 3772-Ա որոշման

ԿԱԶՄ
«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ԱՂԲԱՎԱՅՐ» ՓԲԸ-ԻՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ

Վ.Մարգարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ

Հ. Ռամազյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի առաջին կարգի մասնագետ
Ա. Խուդոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի առաջատար մասնագետ
Ս. Խաչատրյան	«Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ի տնօրեն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**